Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ ք.Երևան, Ավան, Աճառյան 40 հասցեում գտնվող «Երևանի Ներսես Մեծի անվան հ.124 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի՝ Տեխնոլոգիայի ուսուցչի թափուր տեղի համար,շաբաթական ծանրաբեռնվածությունը՝ 15 դասաժամ, Կերպարվեստի ուսուցչի թափուր տեղի համար,շաբաթական ծանրաբեռնվածությունը՝ 13 դասաժամ, Անգլերենի ուսուցչի թափուր տեղի համար,շաբաթական ծանրաբեռնվածությունը՝ 16 դասաժամ, Երգի ուսուցչի թափուր տեղի համար,շաբաթական ծանրաբեռնվածությունը՝ 10 դասաժամ, ռուսերենի գերազանց իմացությամբ դասվարի թափուր տեղի համար(ռուսերենով ուսուցմամբ տարրական դասարաններում դասավանդելու համար) ՝12 դասաժամ ծանրաբեռնվածությամբ:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

1) դիմում /Ձև 1/ , մեկ լուսանկար 3X4 չափսի,

2) բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),

3) անձը հաստատող փաստաթուղթ,

4)«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համապատասխան՝աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկան աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը՝առկայության դեպքում,

5) ինքնակենսագրություն /ձև 5/,

6) այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

7) ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,

8) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),

9) որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկը ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են 2023 թվականի օգոստոսի 14-ից մինչև 2023 թվականի օգոստոսի 25-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ,կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2023 թվականի օգոստոսի 31-ին՝ ժամը 14.00-ին, Երևանի Ներսես Մեծի անվան հ. 124 հիմնական դպրոցում:

Տեղեկությունների համար զանգահարել հետևյալ հեռախոսահամարներով՝ 010 62-50-90, 091 55 56 64: